ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«27» նոյեմբերի 2019 թ. N 73-Ա

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ , ՀԱՏԻԿԱԸՆԴԵՂԵՆ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27 -ի N 1515-Ն որոշման 22-րդ կետի 2-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացմանն աջակցություն ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ Գառնիկ Պետրոսյանին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ОБЩИЙ ОТДЕЛ

Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
պարտականությունները կատարողի
2019 թվականի մարտի 27-ի N73–Ա հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ, ՀԱՏԻԿԱԲՆԴԵՂԵՆ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Գյուղատնտեսությունը երկրի պարենային ապահովություն ու անվտանգություն ապահովող գլխավոր ոլորտն է: Ընդհանուր ռազմավարության մեջ այն ունի առանցքային դեր: Նպատակային քաղաքականության իրականացման ու առկա ներուժի լիարժեք օգտագործման շնորհիվ հնարավոր է որոշակիորեն լուծել բնագավառում ծագած մի շարք խնդիրներ:

2. Ագրարային քաղաքականությունը պետք է նպատակաուղղվի գյուղատնտեսական ծագում ունեցող արտադրանքի արտադրության ծավալի աճին, ներմուծվող արտադրանքը տեղականով փոխարինմանը, նոր տեխնոլոգիաների կիրառմանը, ինչը պահանջում է պետական աջակցության տարբեր մեխանիզմների կիրառում:

3. Սերմնաբուծության արդյունավետ համակարգի ստեղծումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն երկրի պարենային անվտանգության գործում, այն որպես գյուղատնտեսական մշակաբույսերի ագրոէկոլոգիական և գենետիկական բազմազանության վերարտադրության համակարգ անփոխարինելի նշանակություն ունի բուսաբուծության զարգացման տեսակետից:

4. Ներկայումս հանրապետության բուսաբուծության ոլորտի կարևորագույն հիմնահարցերից մեկը դարձել է սերմնաբուծության արդյունավետ միջոցառումների կազմակերպման անհրաժեշտությունը, որից էլ կախված է երկրում սերմնաբուծության բնագավառում առկա առանցքային խնդիրների կարգավորումը:

5. Երաշխավորված բարձր բերքի ստացման հիմնական գրավականը բարձրորակ սերմերով ցանքի կատարումն է: Հանրապետությունում բարձր վերարտադրության սերմացուների գները կարգավորելու, հողօգտագործողների համար այն մատչելի դարձնելու նպատակով հացահատիկային և կերային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում որոշակիորեն կկարգավորվի սերմնաբուծական տնտեսությունների կողմից արտադրվող սերմացուների իրացման գինը՝ ի հաշիվ ծրագրով նախատեսված սուբսիդիաների:

I. ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ, ՀԱՏԻԿԱԸՆԴԵՂԵՆ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ

6. Ներկայումս գյուղատնտեսական որոշ մշակաբույսերի արտադրության ցածր ծավալների պատճառով առաջնահերթ խնդիր է համարվում դրանց ցանքատարածությունների ընդարձակումը, բերքատվության բարձրացումը, պարենային ապահովվածության ու ինքնաբավության բարձր մակարդակի ապահովումը, մասնավորապես, դա վերաբերում է ցորենին, գարուն, առվույտին, կորնգանին և հատիկաընդեղեն մշակաբույսերին:

7. Վերլուծելով ԱՎԿ-ի վերջին երեսուն տարիների տվյալները՝ հանրապետությունում արձանագրվել է կերային բազմամյա խոտաբույսերի ցանքատարածությունների աստիճանական նվազում: Այսպես, եթե 1990 թվականին ցանքատարածությունները կազմել են 250 հազ. հեկտար, 1999 թվականին՝ 93,7 հազ. հեկտար, ապա 2017 թվականին դրանք կազմել են 76.25 հազ. հեկտար: Նկատվել է նաև կերային միամյա և բազմամյա մշակաբույսերի բերքատվության էական նվազում: Առավել մտահոգիչ է այն հանգամանքը, որ բազմամյա բակլազգի խոտաբույսերի (առվույտ, կորնգան) մշակության տարածքների կրճատման հետևանքով հանրապետությունում նվազել է ցանքաշրջանառության կիրառման հնարավորությունը:

8. Հանրապետությունում ցածր լինելով հատիկաընդեղեն արտադրանքի ինքնաբավության մակարդակը, խիստ հրատապ է դրանց արտադրական ծավալների ավելացումն ի հաշիվ ցանքատարածությունների ընդարձակման ու բերքատվության բարձրացման:

9. Ներկայացվում է Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականին հատիկաընդեղեն մշակաբույսերի ցանքատարածքները, միջին և համախառն բերքը:

2017 թվականի դրությամբ ոլոռի, սիսեռի և ոսպի ցանքատարածքների, համախառն ու միջին բերքի ցուցանիշներն ըստ ԱՎԾ-ի

Մշակաբույսի անվանումը	**Ցանքատարածությունը (հա)**	**Միջին բերքը (գ/հա)**	**Համախառն բերքը (տոննա)**
ոլոռ	234	20.4	476.4
սիսեռ	80	22.2	177.7
ոսպ	81	12.2	96.3

10. Հողի սեփականաշնորհման և գյուղատնտեսությունում իրականացված բարեփոխումների արդյունքում հանրապետությունում խաթարվել է սերմնաբուծության համակարգը: Նախկինում գործող ավելի քան երեք տասնյակ մասնագիտացված պետական սերմնաբուծական տնտեսությունների փոխարեն ներկայումս հանրապետությունում գործում են հացահատիկային և կերային մշակաբույսերի սերմերի արտադրության գծով գիտահետազոտական երկու հաստատություն, որոնք լիարժեք ապահովված չեն անհրաժեշտ տեխնիկայով ու սարքավորումներով և ունեն ոռոգման համակարգի, հողերի բարելավման, հողատարածքների ընդարձակման կարիք:

11. Հանրապետությունում սերմնաբուծությամբ զբաղվում են նաև մասնավոր տնտեսավարողները, որոնց կողմից արտադրվում է ոչ բավարար քանակությամբ բարձր վերարտադրության սերմացու:

12. Հանրապետությունում գիտական կենտրոնների ու սերմնաբուծական կազմակերպությունների կողմից իրականացվում են նաև Չորային գոտիներում գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնի (ICARDA), Եգիպտացորենի և ցորենի բարելավման միջազգային կենտրոն ոչ առևտրային գյուղատնտեսական հետազոտությունների ինստիտուտի (SIMMYT), ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Իրանի Իսլամական Հանրապետության և այլ երկրների հավաքածուներում ընդգրկված և շրջանացված հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մի շարք մշակաբույսերի սորտերի փորձարկումներ:

13. Բուսաբուծության բնագավառի ուսումնասիրությունները և վերլուծությունները ցույց են տալիս, որ հանրապետությունում նկատվում է հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի որակյալ, բարձր վերատադրության և բերքատվության մեծ ներուժ ունեցող սերմացուների կարիք: Բարձր վերարտադրության սերմացուի տեղական արտադրության ծավալների ավելացման համար անհրաժեշտ է ներդնել սերմնաբուծության աստիճանական համակարգ, որը հնարավորություն կտա սերմնաբուծությամբ զբաղվելու ինչպես գիտական կենտրոններին, այնպես էլ տարբեր մարզերում գործող մասնագիտացված սերմնաբուծական ֆերմերային տնտեսություններին:

14. Այս տեսանկյունից, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրերը կնպաստեն ոչ միայն սերմնաբուծության զարգացմանը, այլ նաև կարևոր խթան կհանդիսանան տևականորեն չմշակված վարելահողերի շրջանառության մեջ ներգրավմանը, գյուղատնտեսական մշակաբույսերի ագրոտեխնիկական միջոցառումների բարելավմանը, ցանքատարածությունների, համախառն բերքի, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը և տնտեսական աճի ապահովմանը:

II.ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

15. Ծրագրի նպատակներն են.

1) հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային որոշ մշակաբույսերի տեղական արտադրության սերմացուների ինքնաբավության մակարդակի ավելացումը,

2) հանրապետության տարածքում հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային որոշ մշակաբույսերի առաջնային սերմնաբուծության զարգացման խթանում, գյուղատնտեսության ոլորտում գործող գիտական կենտրոնների և մասնավոր սերմնաբուծական տնտեսությունների միջոցով հանրապետության տարածքում արտադրված, բարձր որակ ապահովող սերմացուների ծավալների ավելացումը,

3) բարձրորակ սերմացուի օգտագործմամբ մշակաբույսերի բերքատվության բարձրացումը, հետևաբար նաև գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների եկամուտների ավելացումը,

4) ծրագրի իրականացման ընթացքում արտերկրից հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի սերմերի ներկրվող քանակությունների աստիճանական նվազեցումը, իսկ ծրագրի ավարտին՝ դրանց ներկրման դադարեցումը,

5) հանրապետությունում սերմնաբուծության և սերմարտադրության ոլորտի բարելավումը և շարունակական համակարգի ստեղծումը:

16. Ծրագրի խնդիրներն են.

1) սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման խոչընդոտների գնահատումը և դրանց մեղմման հնարավորությունների օգտագործումը,

2) մշակաբույսերի սորտային կազմի ու բարձրորակ սերմացուի պահանջարկի գնահատումը,

3) սերմնաբուծական տնտեսությունների արտադրական կարողությունների հզորացումը և սերմնաբուծության գործընթացի շարունակականության ապահովման համար նախադրյալների ստեղծումը,

4) ծրագրի մոնիթորինգի իրականացման մեխանիզմի առաջադրումը և ռիսկերի գնահատումը,

5) գյուղատնտեսության ոլորտում գործող գիտական կենտրոններին և Հայաստանի Հանրապետության մարզերի սերմարտադրող ֆերմերային տնտեսություններին ծրագրի դրույթներին համապատասխան սուբսիդավորված գներով էլիտային սերմացուի հատկացումը,

6) հանրապետության սերմարտադրող տնտեսությունների կողմից արտադրված և հողօգտագործողներին վաճառված սերմացուի դիմաց սուբսիդիայի տրամադրման մեխանիզմների կիրառումը,

7) առաջնային սերմնաբուծության կազմակերպում:

III.ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

17. Ծրագիրը նախատեսվում է իրականացնել հետևյալ մոտեցումներով՝

1) աշնանացան ցորենի, գարնանացան գարու, ոլոռի, ոսպի, սիսեռի, առվույտի ու կորնգանի առաջնային սերմնաբուծության կազմակերպման նպատակով նախատեսվում է ՀՀ Շիրակի, Զանգեզուրի և Արարատյան հարթավայրի գյուղատնտեսական գոտիներում հիմնել 1-ին տարվա տնկարաններ, որի համար ծրագրի շրջանակներում կտրամադրվի 12 485 904 դրամ սուբսիդիա /Աղյուսակ 1, 4, 5, 6/: Հաջորդ տարվա տնկարանների հիմնման սուբսիդավորումը կիրականացվի 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված գումարով:

Աղյուսակ 1

Առաջնային սերմնաբուծության նպատակով տրամադրվող սուբսիդիան՝ ըստ գյուղատնտեսական գոտիների և մշակաբույսերի

Գյուղատնտեսական գոտիները	Մշակաբույսը		1-ին տարվա տնկարանի չափը /հա/	Տրամադրվող սուբսիդիայի չափը, /դրամ/
	անվանումը	սորտը		
Շիրակի գոտի	աշնանացան ցորեն	Վասսա,Կրասնոդարսկայա 99, Բեզոստայա 1, Մակար, ԱԹԳ-3516 Նիրսա	0.35	1 951 541
	գարնանացան գարի	Գյումրի, Նուտանս 115, Ստեպտոյե	0.065	324 577
	ոսպ	Թալինի 6,	0.05	83 825
	սիսեռ	Լենինականի 313, Կայուն	0.05	90 784
	առվույտ	Ապարանի տեղական	0.07	171 448
	կորնգան	Սիսիանի տեղական,	0.08	173 913
Արարատյան հարթավայր	աշնանացան ցորեն	Վասսա, Նաիրի 68, Սթիվենս	0.33	1 840 023
	սիսեռ	Անուշ	0.15	272 352
	ոլոռ	Կանգուն	0.05	91 074
	առվույտ	Ապարանի տեղական, Ապոլլո	0.45	1 102 163
Զանգեզուրի գոտի	աշնանացան ցորեն	Վասսա Կրասնոդարսկայա 99,	0.5	2 787 915
	գարնանացան գարի	Մամլյուկ, Նուտանս 115	0.5	2 496 750
	ոլոռ	Լիլի 5	0.05	91 074
	ոսպ	Թալինի 6,	0.05	83 825
	առվույտ	Ապարանի տեղական	0.2	489 850
	կորնգան	Սիսիանի տեղական,	0.2	434 790
Ընդամենը			3.145	12 485 904

2) առաջնային սերմնաբուծությամբ զբաղվող կազմակերպություններին, հավելված 1-ի չափորոշիչներին և ներկայացվող պահանջներին համապատասխան, սուբսիդիան կտրամադրվի պայմանագրային հիմունքներով, որում կներառվեն նաև դրույթներ հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործման, սերմացուի ծրագրով նախատեսված քանակությունների ստացման և դրանց բազմացման վերաբերյալ:

18. 2019-2023 թվականներին սորտաթարմացման և հետագա բազմացման նպատակով արտերկրից կներկրվի աշնանացան ցորենի և գարնանացան գարու էլիտային սերմացու՝ /Աղյուսակ 2/:

Աղյուսակ 2

Աշնանացան ցորենի և գարնանացան գարու արտերկրից ներկրվող էլիտայի քանակությունները՝ ըստ տարիների

Մշակաբույսի անվանումը	**Տարեթիվը**									
	2019		**2020**		**2021**		**2022**		**2023**	
	Սերմացուի քանակը /տոննա/	Հատկացվող սուբսիդիայի գումարը /հազ. դրամ/	Սերմացուի քանակը /տոննա/	Հատկացվող սուբսիդիայի գումարը /հազ. դրամ/	Սերմացուի քանակը /տոննա/	Հատկացվող սուբսիդիայի գումարը /հազ. դրամ/	Սերմացուի քանակը /տոննա/	Հատկացվող սուբսիդիայի գումարը /հազ. դրամ/	Սերմացուի քանակը /տոննա/	Հատկացվող սուբսիդիայի գումարը /հազ. դրամ/
Աշնանացան ցորեն /էլիտա/	60	17400	40	11600	40	11600	40	11600	40	11600
Գարնանացան գարի /էլիտա/	-	-	20	6200	20	6200	20	6200	10	3100
Ընդամենը	60	17400	60	17800	60	17800	60	17800	50	14700

1) 2019 թվականին արտերկրից ներկրվող աշնանացան ցորենի 60 տոննա էլիտային սերմացուն պայմանագրային հիմունքներով կտրամադրվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N 24-Ն որոշման համաձայն գրանցված ֆիզիկական և իրավաբանական անձանց,

2) ծրագրի շահառու սերմնաբուծական տնտեսությունները, ներկրվող էլիտային սերմացուից առաջին վերարտադրության սերմացուի ստացման նպատակով, գյուղատնտեսության նախարարություն են ներկայացնում համապատասխան դիմում-հայտ, որում նշվում են մշակաբույսը, ցանքի նորման 1 հա-ի հաշվով, հայցվող սերմացուի

վերարտադրությունը և քանակությունը, տնտեսության արտադրական հնարավորությունները, սերմադաշտի մակերեսը, բայց ոչ պակաս 5 հեկտար և տնտեսության կողմից սերմադաշտերի մշակության համար պահանջվող ագրոտեխնիկական կանոնների իրականացման պատրաստակամությունը,

3) ծրագրի շահառու սերմնաբուծական տնտեսությունների կողմից 18 –րդ կետի 2-րդ ենթակետում նշված դիմում-հայտերը նախարարությանը ներկայացվում են էլեկտրոնային փոստի միջոցով կամ առձեռն,

4) ներկրվող աշնանացան ցորենի և գարնանացան գարու 1 կգ էլիտային սերմացուի ձեռքբերման համար նախատեսվել է կողմնորոշիչ գին՝ 450-ական դրամ (ներառյալ տեղափոխումն ու Հայաստանի Հանրապետությունում հարկային պարտավորություններն ու այլ ծախսերը), որից սուբսիդիան կազմում է համապատասխանաբար 290 և 310 դրամ,

5) աշնանացան ցորենի և գարնանացան գարու էլիտային սերմացուի 1 կիլոգրամը սերմնաբուծական տնտեսություններին կտրամադրվի համապատասխանաբար 160 և 140 դրամ արժեքով, նախապես վճարման պայմանով,

6) սուբսիդավորվող սերմացուի ներկրումը կիրականացվի «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

19. Ծրագրի շրջանակներում կսուբսիդավորվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N 24-Ն որոշման համաձայն գրանցված ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից արտադրվող և հողօգտագործողներին մատչելի գնով վաճառվող աշնանացան ցորենի մինչև 400 և գարնանացան գարու մինչև 150 տոննա էլիտային սերմացուների քանակությունները,

1) աշնանացան ցորենի և գարնանացան գարու էլիտային սերմացուի 1 կիլոգրամի նվազագույն շահավետ գինը կազմում է համապատասխանաբար 220 և 200 դրամ: Աշնանացան ցորենը հողօգտագործողներին կվաճառվի 160, իսկ գարնանացան գարին՝ 140 դրամ արժեքով, որի դիմաց սերմնաբուծական տնտեսությունները կստանան սուբսիդիա 60 դրամ՝ 1 կիլոգրամի հաշվով /աղյուսակ N 3/,

2) ծրագրի շահառու սերմնաբուծական տնտեսությունների կողմից հողօգտագործողներին փաստացի տրամադրված էլիտային սերմացուների տեսակների և քանակների վերաբերյալ տեղեկանքը տրամադրվում է նախարարությանը՝ էլեկտրոնային փոստի միջոցով /համաձայն N 1 ձևի/ կամ առձեռն:

20. Ծրագրի շրջանակներում կսուբսիդավորվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N 24-Ն որոշման համաձայն գրանցված ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից 2019 թվականին արտադրվող և հողօգտագործողներին մատչելի գնով վաճառվող աշնանացան ցորենի մինչև 70,

գարնանացան գարու 2321.28, ոլոռի 10, ոսպի 20, սիսեռի 10, առվույտի 7 և կորնգանի 25 տոննա 1-ին վերարտադրության սերմացուների քանակությունները,

1) աշնանացան ցորենի, ոլոռի, ոսպի, սիսեռի, առվույտի և կորնգանի առաջին վերարտադրության սերմացուի 1 կիլոգրամի նվազագույն շահավետ գինը կազմում է համապատասխանաբար 160, 150, 390, 360, 400, 1800 և 400 դրամ: Սերմացուները հողօգտագործողներին կտրամադրվեն աշնանացան ցորենը՝ 110, գարնանացան գարին՝ 100, ոլոռը՝ 240, ոսպը՝ 210, սիսեռը՝ 250, առվույտը՝ 1400 և կորնգանը՝ 250 դրամ արժեքով, որի դիմաց սերմնաբուծական տնտեսությունները կստանան 1կգ-ի հաշվով սուբսիդիա՝ աշնանացան ցորենը՝ 50, ոլոռը, ոսպը, սիսեռը և կորնգանը՝ 150-ական, իսկ առվույտը՝ 400 դրամ:

2) ծրագրի շահառու սերմնաբուծական տնտեսությունների կողմից հողօգտագործողներին փաստացի տրամադրված առաջին վերարտադրության սերմացուների տեսակների և քանակների վերաբերյալ տեղեկանքը տրամադրվում է նախարարությանը՝ էլեկտրոնային փոստի միջոցով /համաձայն N 2 ձևի/ կամ առձեռն:

21. Տեղական արտադրության իրացված սերմացուների համար սուբսիդիաները սերմարտադրող ֆերմերային տնտեսություններին տրամադրվում են համապատասխան մոնիթորինգի արդյունքների ամփոփումից հետո մեկ ամսվա ընթացքում:

22. Սերմարտադրող ֆերմերային տնտեսություններին սուբսիդիաները կփոխանցվեն իրենց կողմից ներկայացված հաշվեհամարին:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

23. Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը ՀՀ պետական բյուջեն է:

24. Հողօգտագործողներին սուբսիդավորված գներով սերմացուի հատկացումը կնպաստի սերմնաբուծական տնտեսությունների ֆինանսական կայունության բարելավմանը, որը թույլ կտա հետագա տարիներին զարգացնել տեղական արտադրության սերմնաբուծությունն ու սերմնարտադրությունը:

25. Ծրագրի շարունակականության և սերմնաբուծության ու սերմնարտադրության շղթայի անընդհատությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում 2020–2023 թվականներին ծրագիրը կիրականացվի միևնույն մեխանիզմներով:

26. Ծրագրով ձեռքբերված աշնանացան ցորենի 60 տոննա էլիտային սերմացուով կկատարվի շուրջ 200 հա ցանք, որից ակնկալվում է ստանալ 800 տոննա առաջին վերարտադրության սերմացու, որով էլ հաջորդ տարի ցանք կկատարվի շուրջ 2660 հա-ի վրա:

Իսկ աշնանացան ցորենի շուրջ 400 տոննա էլիտային և 70 տոննա առաջին վերարտադրության, գարնանացան գարու 150 տոննա էլիտային և 2321.28 տոննա առաջին վերարտադրության սերմացուով և կկատարվի շուրջ 13000 հա ցանք:

27. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 195,000,000 ՀՀ դրամ, որը ներկայացված է 1-ին և 3-րդ աղյուսակներում:

Աղյուսակ N 3

2019 թվականին ներկրվող և սուբսիդավորվող սերմացուի քանակություններն ու պահանջվող սուբսիդիայի չափը

Մշակաբույսի անվանումը	Արտերկրից ձեռքբերում				
	էլիտային սերմերի քանակը /տոննա/	Մեկ կգ-ի ձեռքբերման գին / դրամ/	Մեկ կգ-ի վաճառքի գինը / դրամ/	Պահանջվում է սուբսիդիա մեկ կգ-ի համար / դրամ/	Ընդամենը պահանջվում է սուբսիդիա / դրամ/
Աշնանացան ցորեն	60	450	160	290	17 400 000
Տեղական արտադրության էլիտային սերմացուների համար սուբսիդիայի տրամադրում					
Մշակաբույսի անվանումը	Էլիտային սերմացուի քանակը, /տոննա/	Մեկ կգ-ի նվազագույն շահավետ գինը / դրամ/	Մեկ կգ-ի վաճառքի գինը / դրամ/	Պահանջվում է սուբսիդիա մեկ կգ-ի համար / դրամ/	Ընդամենը պահանջվում է սուբսիդիա /դրամ/
Աշնանացան ցորեն	400	220	160	60	24 000 000
գարնանացան գարի	150	200	140	60	9 000 000
Տեղական արտադրության առաջին վերարտադրության սերմացուների համար սուբսիդիայի տրամադրում					
Մշակաբույսի անվանումը	Առաջին վերարտադրության սերմացուի քա/նակը /տոննա	Մեկ կգ-ի նվազագույն շահավետ գինը / դրամ/	Մեկ կգ-ի վաճառքի գինը / դրամ/	Պահանջվում է սուբսիդիա մեկ կգ-ի համար / դրամ /	Ընդամենը պահանջվում է սուբսիդիա /դրամ/
աշնանացան ցորեն	70	160	110	50	3 500 000
Գարնանացան գարի	2321.28	150	100	50	116 064 096
Ոլոռ	10	390	240	150	1 500 000
Ոսպ	20	360	210	150	3 000 000
Սիսեռ	10	400	250	150	1 500 000
Առվույտ	7	1800	1400	400	2 800 000
Կորնգան	25	400	250	150	3 750 000

V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

28. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) հանրապետությունում առաջնային սերմնաբուծությամբ զբաղվող կազմակերպությունների արտադրական կարողությունների հզորացումը,

2) հանրապետության տարածքում արտադրվող բարձր վերարտադրության հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի սերմացուի արտադրական ծավալների ավելացումը և տեղական սերմացուով ինքնաբավության մակարդակի բարձրացումը,

3) սերմերի արտադրության բոլոր օղակներում պետական վերահսկողության բարելավումը,

4) երկրի ագրոպարենային համակարգի կայուն իրավիճակի ձևավորման համար նախադրյալների ստեղծումը,

5) ցանքատարածությունների և համախառն բերքի ծավալների ավելացումը, գյուղատնտեսական տնտեսությունների եկամուտների բարձրացումը և տնտեսական աճի ապահովումը:

ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	2019 թվականին 3,145 հա (աշնանացան ցորենի 1,18 հա, գարնանցան գարու 0.55, ոլոռի 0.1, ոսպի 0.1, սիսեռի 0.2, առվույտի 0.72 և կորնգանի 0.28 հա) ընտրության առաջին տարվա տնկարանների հիմնում: 2019 թվականին աշնանացան ցորենի էլիտային սերմացուի քանակների ավելացում 60 տոննայով: Մինչև 400 տոննա աշնանացան ցորենի, 150 տոննա գարնանացան գարու էլիտային, 70 տոննա աշնանացան ցորենի, 2321,28 տոննա գարնանացան գարու, 10 տոննա ոլոռի, 20 տոննա ոսպի, 10 տոննա սիսեռի, 7 տոննա առվույտի և 25 տոննա կորնգանի առաջին վերարտադրության սերմացուներով ցանքերի կատարում:
Համառոտ նկարագրությունը	Ծրագրով նախատեսվում է 2019 թվականին սուբսիդավորել առաջնային սերմնաբուծությամբ զբաղվող սերմնաբուծական կազմակերպություններին՝ ՀՀ Արարատյան հարթավայրի, Շիրակի և Զանգեզուրի գյուղատնտեսական գոտիներում 3.145 հա ընդհանուր մակերեսով ընտրության առաջին տարվա տնկարանների հիմնման նպատակով: Ծրագրով նախատեսվում է 2019 թվականին սուբսիդավորել

	արտերկրից ներկրվող աշնանացան ցորենի 60 տոննա էլիտային սերմացուի արժեքը, որը կտրամադրվի ծրագրի շահառու սերմարտադրող կազմակերպություններին: Ծրագրի շրջանակներում կսուբսիդավորվի նաև տեղական սերմարտադրողների կողմից արտադրված մինչև 400 տոննա էլիտային, 70 տոննա առաջին վերարտադրության աշնանացան ցորենի, 150 տոննա էլիտային, 2321.28 տոննա առաջին վերարտադրության գարնանացան գարու, ոլոռի 10 տոննա, ոսպի 20 տոննա, սիսեռի 10 տոննա, առվույտի 7 տոննա և կորնգանի 25 տոննա առաջին վերարտադրության սերմացուների քանակությունները հողօգտագործողներին մատչելի գներով տրամադրման նպատակով:
Նպատակը/ կարևորությունը	Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում առկա ցանքատարածությունների քանակը պետք է փաստել, որ ինչպես տեղական արտադրության, այնպես էլ արտերկրից ներկրված սերմացուի քանակությունները բավարար չեն բարձրորակ սերմացուով արտադրություն կազմակերպելու համար, որի պատճառով գյուղացիական տնտեսություններն հաճախ օգտագործում են սեփական արտադրության, ցանքային ցածրորակ հատկանիշներով օժտված սերմացու, ինչը չի կարող ապահովել բարձր բերքատվություն: Բացի այդ, հաճախ մշակության համար անհրաժեշտ պայմանների բացակայության և մշակության տեխնոլոգիական պայմանների ոչ լիարժեք կիրառելու արդյունքում ստացվում է ցածրորակ արտադրանք, որից սերմացուի առանձնացումը դառնում է ոչ նպատակահարմար և նոր սերմացուի ձեռք բերման խնդիրը դառնում է անհրաժեշտություն: Ուստի կարևորվում է սերմնաբուծության և սերմարտադրության ճյուղում պետական աջակցության ծրագրերի իրականացումը, որը կաջակցի ոլորտի բարելավմանն ու զարգացմանը:
Տեղեկատվության հավաքագրումը/ աղբյուրը	Տեղեկատվությունն ակնկալվում է ստանալ ինչպես մոնիթորինգ իրականացնողներից, սերմնաբուծական տնտեսություններից (համաձայն ստացված և իրացված սերմացուի քանակությունների), այնպես էլ նախարարության համապա-տասխան ստորաբաժանումների մասնագետների կողմից կատարվելիք հարցումների ու դիտարկումների արդյունքում: Տեղեկատվությունը հավաքագրվելու և վերլուծվելու է ծրագրի իրականացման համար պատասխանատու ստորաբաժանման կողմից:
Հաշվարկման մեթոդը	Աշնանացան ցորեն էլիտա – 60 տոննա (ներկրվող սերմացու): 250կգ/հա(ցանքի նորմա) = 200հա x 5 տոննա (բերքը 1 հա-ից) = 1000 տոննա (համախառն բերք) - 25% (խառնուրդ) = 800 տոննա մաքուր առաջին վերարտադրության սերմացու:

	Աշնանացան ցորեն էլիտային 400 տոննա (սուբսիդավորվող սերմացու): 300 կգ /հա (ցանքի նորմա)= 1333 հա x 4 տոննա (բերքը 1 հա-ից) = 5330 տոննա (համախառն բերք)- 25% (խառնուրդ) = 4000 տոննա մաքուր առաջին վերարտադրության սերմացու: Աշնանացան ցորեն 70 տոննա առաջին վերարտադրության (սուբսիդավորվող սերմացու): 300 կգ /հա (ցանքի նորմա)= 233,3 հա x 3 տոննա (բերքը 1 հա-ից) = 700 տոննա (համախառն բերք): Գարնանացան գարի 150 տոննա էլիտային (սուբսիդավորվող սերմացու): 200 կգ /հա (ցանքի նորմա)= 750 հա x 3 տոննա (բերքը 1 հա-ից) = 2250 տոննա (համախառն բերք)- 25% (խառնուրդ) = 1687,5 տոննա մաքուր առաջին վերարտադրության սերմացու: Գարնանացան գարի 2321,28 տոննա առաջին վերարտադրության (սուբսիդավորվող սերմացու): 200 կգ /հա (ցանքի նորմա)= 11606,4 հա x 3 տոննա (բերքը 1 հա-ից) = 34819,2 տոննա (համախառն բերք): Ոլոռ – 10 տոննա առաջին վերարտադրության (սուբսիդավորվող սերմացու): 250 կգ/հա (ցանքի նորմա) = 40 հա x 2.0 տոննա (բերքը 1 հա-ից) = 80 տոննա (համախառն բերք): Ոսպ – 20 տոննա առաջին վերարտադրության (սուբսիդավորվող սերմացու): 120 կգ/հա (ցանքի նորմա) = 166 հա x 2 տոննա (բերքը 1 հա-ից) = 332 տոննա(համախառն բերք): Սիսեռ – 10 տոննա առաջին վերարտադրության (սուբսիդավորվող սերմացու): 100 կգ/հա(ցանքի նորմա) = 100 հա x 1.8 տոննա (բերքը 1 հա-ից) = 180 տոննա (համախառն բերք): Առվույտ – 7 տոննա առաջին վերարտադրության (հատկացվող սերմացու): 23 կգ/հա (ցանքի նորմա) = 304 հա x 15 տոննա (չոր խոտի բերքը 1 հա-ից) = 4560 տոննա (համախառն բերք): Կորնգան – 25տ առաջին վերարտադրության (հատկացվող սերմացու): 140 կգ/հա(ցանքի նորմա) = 166.6 հա x 7տոննա (չոր խոտի բերքը 1 հա-ից) = 1166 տոննա (համախառն բերք): 2019 թվականին հիմնված 3.145 հա ընդհանուր մակերեսով տնկարաններից 2023 թվականին կստացվի աշնանացան ցորենի 5983 տոննա, գարնանացան գարու 3067 տոննա, ոլոռի 101.6 տոննա, ոսպ 73.4, սիսեռի 102 տոննա, առվույտի 42.2

	տոննա և կորնգանի 9.2 տոննա սուպերէլիտային սերմացու:
Տեղեկատվության սահմանափակումները	Տրամադրվող սերմացուի, ապրոբացիաների, սերմադաշտերի բերքատվության գնահատման, ստացված փաստացի համախառն բերքի և մաքուր սերմացուի հաշվառումների ու գրանցումների արդյունքում տեղեկատվության սահմանափակումները գործնականում բացառվում է:
Ցուցանիշի տեսակը	Սերմացուի քանակությունը հիմնական ցուցանիշն է, որով չափվում է ծրագրի իրականացման ուղղակի արդյունքը:
Չափման միավորը	Տոննա
Ներկայացման եղանակը	Տարեկան կտրվածքով կատարողականները ներկայացվում են կուտակային եղանակով
Հաշվետվողականության ցիկլը	Տարեկան
Թույլատրելի շեղումը	Թիրախային մակարդակի համեմատ փաստացի ցուցանիշների 7-10 տոկոսային կետով շեղումը համարվում թույլատրելի
Պատասխանատվությունը	Ցուցանիշների ձեռք բերման և հաշվետվողականության համար պատասխանատու է ՀՀ գյուղատնտեսության նախա-րարությունը (համապատասխան ստորաբաժանումը)

VI.ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

29. Ծրագրի մոնիթորինգն իրականացվելու է նախարարության կողմից:

30. Նախարարության մասնագետները ընտրանքային կարգով, կարող են իրականացնել ուսումնասիրություն՝ ծրագրի պայմաններին սերմնաբուծական տնտեսությունների համապատասխանության վերաբերյալ:

31. Մոնիթորինգ իրականացնող մասնագետները պարբերաբար (առնվազն 3 ամիսը մեկ անգամ) նախարարություն կներկայացնեն հաշվետվություն, որը պետք է պարունակի մանրամասն տեղեկատվություն ծրագրի ընթացքի և հնարավոր խախտումների վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ առաջարկություններ ծրագրի իրականացման պայմանների բարելավման վերաբերյալ:

32. Մոնիթորինգն իրականացվում է գյուղատնտեսական մշակաբույսերի սերմացուներ ստացած՝ N 1 ձևում ընդգրկված շահառուների թվի 5 տոկոսի չափով (ըստ գոտիականության) ընտրանքային եղանակով ընտրված հողատարածքներում:

VI ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐ

34. Ծրագրի իրականացման հնարավոր ռիսկեր են՝

1) անբարենպաստ կլիմայական պայմանների (ձմռան երկարատև սառնամանիքներ, գարնանային ցրտահարություն, կարկուտ, խորշակ, սելավ, փոթորիկ) հետևանքով սերմնադաշտերի մասնակի կամ ամբողջական վնասվածությունը,

2) ներկրվող սերմացուի համար նախատեսվածից բարձր գների առաջադրումը,

3) ներկրվող սերմացուի մատակարարման ժամկետների խախտումները,

4) եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով դաշտային աշխատանքների կազմակերպման համար ժամկետների խախտումը:

Վերոնշյալ հնարավոր ռիսկերի մեղմման նպատակով նախատեսվում է բանակցություններ վարել արտերկրի և տեղական սերմարտադրող կազմակերպությունների հետ և սերմացուն ձեռք բերել այն կազմակերպությունից, որը կառաջարկի բարձր որակ ու համեմատաբար ցածր գին, ընդ որում գործընթացն անհրաժեշտ է կազմակերպել գարնանացանի աշխատանքները սկսվելուց առնվազն մեկ ամիս առաջ: Բնական աղետների հնարավոր ռիսկերը մեղմելու նպատակով, անհրաժեշտ է պահպանել մշակության տեխնոլոգիայով նախատեսված բոլոր ագրոմիջոցառումները (ցրտահերկ, պարարտացում, ոռոգում և այլն), դրանք կատարել ժամանակին և որակով:

Հավելված 1

ԱՌԱՋՆԱՅԻՆ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1. Հողատարածքի մակերեսը պետք է լինի առնվազն 10 հա (սեփականության կամ երկարաժամկետ վարձակալության իրավունքով):

2. Առավելությունը տրվում է ոռոգվող հողատարածքներին և ավելի մեծ հողակտոր ունեցող սերմնաբուծական տնտեսություններին:

3. Առաջնային սերմարտադրության կազմակերպման և իրականացման փորձ, արտադրական համապատասխան պայմանների առկայություն:

ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N 24-Ն որոշման համաձայն ֆիզիկական և իրավաբանական անձանց գրանցում:
2. Բարձր ագրոտեխնիկայի կիրառում, ցանքաշրջանառության պարտադիր իրականացում:
3. Սերմերի ծագումը և որակը հավաստող փաստաթղթերի առկայություն:
4. Առաջնային սերմնաբուծության համար նախատեսված սարքավորումներ և գործիքներ՝ կալսիչ, զտիչ, սերմերի կշռման և փաթեթավորման հնարավորություն:
5. Սերմերի պահպանության համար համապատասխան պայմաններ ունեցող պահեստային տնտեսության առկայություն:
6. Լիցենզավորված մասնագետների կողմից սերմադաշտերի ապրոբացիայի իրականացում, սերմացուների լաբորատոր քննություն և հավաստագրում:
7. Սորտային քաղհան:
8. Դաշտային մատյանի վարում:
9. Սերմերի որակը հավաստող փաստաթուղթ:

Աղյուսակ 4

Աշնանացան ցորենի առաջնային սերմնաբուծության փուլերը, սուպերէլիտայի և էլիտայի ստացվող քանակությունները 2019-2023 թվականների ժամանակահատվածում (ընտրության առաջին տարվա տնկարանի մակերեսը 1.18 հա)

Փուլ	**Պահանջվող սերմ (տ)**	**Ցանքի սխեման/ նորման (տ/հա)**	**Պահանջվող ցանքատարածությունը (հա)**	**Հեկտարի միջին բերքը (տ)**	**Համախառն բերք (հա x տ) (տ)**	**Բերքից խառնուրդի ելքը (%)**	**Որից սերմ (տ)**	**Պահանջվող գումարի չափը (դրամ)**	**1կգ սերմացուի ինքնարժեքը, դրամ**
Ընտրության առաջին տարվա տնկարան (2019-2020թ)	45000 ընտանիք	25սմ x 15սմ	1.18	-	-	-	0.62*	6 579 479	
Ընտրության երկրորդ տարվա տնկարան (2020-2021թ)	0.62	0.25	2.5	5.0	12.5	20	10.0	7 650 000	765
Բազմացման տնկարան՝ սուպերէլիտա (2021-2022թ)	10.0	0.28	35.7	5.0	178.5	25	133.8	30 105 000	225
Էլիտա (2022-2023թ)	133.8	0.28	477.8	4.5	2150.1	25	1612.5	264 450 000	164

***ընտրված լավագույն հասկերից ստացված սերմը**

Աղյուսակ 5

Գարնանացան գարու առաջնային սերմնաբուծության փուլերը, սուպերէլիտայի և էլիտայի ստացվող քանակությունները 2019-2023 թվականների ժամանակահատվածում (ընտրության առաջին տարվա տնկարանի մակերեսը 0.565 մ^2)

Փուլ	**Պահանջվող սերմ (տ)**	**Ցանքի սխեման/ նորման (տ/հա)**	**Պահանջվող ցանքատարածությունը (հա)**	**Հեկ տարի միջին բերքը (տ)**	**Համախառն բերք (հա x տ) (տ)**	**Բերքից խառնուրդի ելքը (%)**	**Որից սերմ (տ)**	**Պահանջվող գումարի չափը (դրամ)**	**1կգ սերմացուի ինքնարժեքը, դրամ**
Ընտրության առաջին տարվա տնկարան (2019-2020թ)	20000 ընտանիք	25սմ x 15սմ	0,56	-	-	-	0.24*	2 821 327	
Ընտրության երկրորդ տարվա տնկարան (2020-2021թ)	0.24	0.20	1.2	4.0	4.8	25	3.6	2 808 000	780
Բազմացման տնկարան՝սուպերէլիտա (2021-2022թ)	3.6	0.20	18.0	4.0	72	25	54.0	13 932 000	258
Էլիտա (2022-2023թ)	54.0	0.22	245.4	4.0	981.6	25	736.2	125 890 200	171

*ընտրված լավագույն հասկերից ստացված սերմը

Աղյուսակ 6

Առվույտի, կորնգանի, ոլոռի, ոսպի ու սիսեռի առաջնային սերմնաբուծության փուլերը և սուպերէլիտայի ստացվող քանակությունները 2019-2023 թվականների ժամանակահատվածում Առվույտի, կորնգանի, ոլոռի, ոսպի ու սիսեռի առաջնային սերմնաբուծության փուլերը և սուպերէլիտայի ստացվող քանակությունները 2019-2023 թվականների ժամանակահատվածում

Մշակաբույսը	**Փուլ**	**Պահանջվող սերմ (տ)**	**Ցանքի նորման/ սխեման (տ/հա)**	**Պահանջվող ցանքատարածություն (հա)**	**1հա-ի միջին բերքը (տ)**	**Համախառն բերք (հա x տ)**	**Բերքից խառնուրդի ելքը(%)**	**Մաքուր սերմ (տ)**
Առվույտի սերմնաբուծական տնկարան	I	450 ընտանիք	5մ x 0,3մ	0,07	-	-	65%	0,0147
	II	0,0147		0,66	0,6	0,0462	50%	0,0231
	III	0,0231		1,0	0,6	0,6	50%	0,3
	IV	0,3		13,6	0,6	8,1	50%	4.1
Կորնգանի I-տարվա սերմնաբուծական տնկարան	I	460 ընտանիք	5մ x 0,3մ	0,08	-	-	65%	0,0299
	II	0,0299	0,15	0,2	1,3	0,26	25%	0,19
	III	0,19	0,15	1,26	1,4	1,76	25%	1,32
	IV	1,32	0,15	8,8	1,4	12,3	25%	9.2
Ոլոռ, Սիսեռ	I	250ընտանիք	2մ x 40սմ	0,05	-	-	25%	0,056
	II	0,056		0,4		0,6	25%	0,45
	III	0,45		3,0		4,5	25%	3,4
	IV	3,4		22,6		33,9	25%	25,4
Ոսպ	I	250 ընտանիք	2մ x 30սմ	0,05	1,4	0,07	25%	0,052
	II	0,052		0,46		0,64	25%	0,48
	III	0,48		4,0		5,6	25%	4,2
	IV	4,2		35,0		49,0	25%	36,7

Ձև N1

ՏԵՂԵԿԱՆՔ

2019 թվականին ..... .սերմատադրողի կողմից հողօգտագործողներին տրամադրված գյուղատնտեսական մշակաբույսերի էլիտային սերմացուների քանակությունների վերաբերյալ

Հ/Հ	Մարզը	Համայնք	Հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը	Անձնագրի տվյալները (սերիան, համարը, տրված է) և հեռախոսահամարը	Աշնանացան ցորեն	Գարնանացան գարի	Հողօգտագործողի ստորագրությունը
					Տրամադրված քանակությունը /տոննա/	Տրամադրված քանակությունը /տոննա/	
1							
2							
3							

Ձև N 2

ՏԵՂԵԿԱՆՔ

2019 թվականին ..... .սերմատադրողի կողմից հողօգտագործողներին տրամադրված գյուղատնտեսական մշակաբույսերի առաջին վերարտադրության սերմացուների քանակությունների վերաբերյալ

Հ/Հ	Մարզը	Համայնք	Հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը	Անձնագրի տվյալները (սերիան, համարը, տրված է) և հեռախոսահամարը	Աշնանացան ցորեն /տոննա/	Գարնանացան գարի /տոննա/	Ոլոռ /տոննա/	Ոսպ /տոննա/	Սիսեռ /տոննա/	Կորնգան /տոննա/	Առվույտ /տոննա/	Հողօգտագործողի ստորագրությունը
1												
2												
3												